# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 05

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստման և անցկացման նպատակով տեղամասային կենտրոն սահմանել Ծաղկունք համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 5 հասցեում գտնվող մշակույթի տան շենքը:

2. Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող անձ նշանակել Ծաղկունք համայնքի ղեկավարի տեղակալ Ռաֆիկ Անդրանիկի Սարգսյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. փետրվարի 11
գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-88, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 06

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրաքվեի մասին>> Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի վեցերորդ, յոթերորդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2020 թվականի ապրիլի 5-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման նպատակով քարոզչական պաստառներ փակցնելու համար Ծաղկունք համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Ծաղկունք համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 1 և թիվ 3 հասցեներում գտնվող շինությունների պատերին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. փետրվարի 11
գ.Ծաղկունք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ծաղկունք, 4-74-83, tsaghkunq.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 08

## ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրաքվեի մասին>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի երկրորդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի անցկացման նպատակով քարոզչություն իրականացնելու համար սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի Սայաթ-Նովա 5 հասցեում գտնվող մշակույթի տան դիմացի բացօթյա տարածքը՝ յուրաքանչյուր օր ժամը $11^{00}$-ից մինչև $17^{00}$:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

20<u>20</u>թ. փետրվարի 12
գ.Ծաղկունք